

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Պրոբացիայի ծառայության Կոտայքի մարզի փորձագետ Վազգեն Համլետի Առաքելյանի 2019 թվականի դեկտեմբերի 24-ից 2020 թվականի մարտի 16-ը աշխատած ժամանակահատվածի համար

Ես՝ Վազգեն Համլետի Առաքելյանս Պրոբացիայի ծառայության Կոտայքի մարզում որպես փորձագետ աշխատում եմ 2019 թվականի դեկտեմբերի 24-ից 2020 թվականի մարտի 16-ը ընկած ժամանակահատվածում և իրականացրել եմ հետևյալ աշխատանքները.

1. Պատասխանել եմ Պրոբացիայի ծառայությունում ստացված պաշտոնական գրություններին, ինչպես նաև քաղաքացիների, պրոբացիայի շահառուների դիմումներին և բողոքներին:

2. Մասնակցել եմ պրոբացիայի շահառուների վերասոցիալականացմանն ուղղված սոցիալ-հոգեբանական աշխատանքներին, պրոբացիայի շահառուներին ցուցաբերել եմ հոգեբանական աջակցություն:

3. Մշակել եմ մի շարք ծրագրեր պրոբացիայի շահառուների համար՝ մշակութային և կրթական միջոցառումներին և ծրագրերին մասնակցությունն ապահովելու նպատակով:

4. Մշակել և Պրոբացիայի ծառայության պետի հաստատմանն եմ ներկայացրել պրոբացիայի ոլորտին վերաբերող մի շարք որոշումներ:

5. Նշված ժամանակահատվածում իմ տրամադրության տակ եղել են 20 շահառու, որից 13-ը պատիժը պայմանականորեն չկիրառելու վերաբերյալ փորձաշրջանով, 3 շահառու՝ տուգանք պատժի տեսակով, 2 շահառու՝ հանրային աշխատանքի են ընդգրկվել:


6. Կատարել եմ այց Քրեակատարողական հիմնարկներ, ծանոթացել եմ նրանց սոցիալական պայմաններին, ուսումնասիրել կյանքի և աշխատանքի նկատմամբ ունեցած մոտիվացիաները:

7. Կազմել եմ պրոբացիայի շահառուների վերաբերյալ զեկույցներ և վերահսկողության պլան:

8. Ընդունել և հոգեբանական աջակցություն եմ ցուցաբերել Պրոբացիայի շահառուներին, ինչպես նաև կատարել եմ ոխակերի և պահանջմունքների գնահատում և կազմել եմ վերասոցիալականացման անհատական ծրագրեր:

9. Կազմակերպել եմ Պրոբացիայի շահառուների նկատմամբ մասնագիտական վերապատրաստման և վերաորակավորման աշխատանքներ:

Պրոբացիայի ծառայության Կոտայքի մարզի փորձագետ



Վազգեն Համլետի Առաքելյան

16.03.2020 թ.